



# Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ՀԱԿՈՒ ԱՐԱՄՅԱՆ

## ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՁՐՈՆՏՈՒՄ

ա) ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ



րտասահմանյան պայմաններում, էապես դժբախտ հայ զանգվածների մեջ, ամենադժբախտ տարրը, կարելի է ասել, ուսուցիչներն են: Նրանք, ընդհանրապես, արհամարհված են: Ուսուցիչների նկատմամբ «վարժապետ» մակդիրը հոմանիշ է ստորադաս և փոքր ինչ ծիծաղելի մի անձնավորության...

Եգիպտոսի հայ համայնքի Սահմանադրության մեջ կա հատուկ հոդված, որը «ազգային վճարյալ պաշտոնյաներ»ին զրկում է համայնական գերադաս, ղեկավար մարմիններում ընտրվելու իրավունքից: Այդ հոդվածը ի նկատի ունի, առաջին հերթին, ուսուցիչներին:

Հայ ուսուցչի տնտեսական ապահովությունը միանգամայն անմխիթար է Սփյուռքում: Ուսուցիչները ենթակա են հոգաբարձուների քմահաճույթին և կամայականություններին. հերթ է, որ մեկ ուսուցիչ դադարի հոգաբարձության ազդեցիկ անդամներից մեկին հաճելի անձնավորություն լինելուց, և հա նա դուրս է շարտվում դպրոցից, ազատվում է իր պաշտոնից... Հազար ու մեկ նվաստացումների է ենթարկվում ուսուցիչը նոր պաշտոն ձեռք բերելու համար:

Իսկ ի՞նչպես է մեզ մոտ, Սովետական Հայաստանում:

Ուսուցչությունը, մեզ մոտ, ամենից ավելի հարգված պաշտոններից մեկն է: Մեր սեփական պարզիկայի Գերագույն Սովետի նախագահը՝

Սիմակ Սահակյանը ուսուցիչ է: Դեռևս անցյալ տարի, հարյուրավոր վաստակավոր ուսուցիչներ և ուսուցչուհիներ արժանացան համամիութենական բարձր շքանշանների:

Ուսուցիչները, սովետական երկրներում, լավ աշխատավարձ են ստանում, և իրենց պաշտոնի կայունությունը ապահովված է: Պաշտոնավարության տարիների հետ, ավելանում է նաև նրանց աշխատավարձը: Վաստակավոր ուսուցիչները, բացի իրենց աշխատավարձից, ստանում են նաև բազմամյա ծառայության համար թոշակ: Շատերը, քանահինգ տարվա ծառայությունից հետո, շարունակում են պաշտոնավարել. այդպիսիները ստանում են և՛ աշխատավարձ, և՛ երկարամյա աշխատանքի թոշակ:

Արտասահմանից ներգաղթած զանգվածների հետ, հայրենիք են եկել նաև հարյուրներով ուսուցիչներ: Նրանք ընդգրկված են Պետական Համալսարանում, ինստիտուտներում, տեխնիկումներում, դպրոցներում: Հայրենադարձ ուսուցիչների մեծագույն տոկոսը սովորեցնում են օտար լեզուներ: Կան նաև կերպարվեստի դասատուներ՝ Կերպարվեստի տեխնիկումում, երաժշտության ուսուցիչներ՝ երաժշտության ուսումնարանում և Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դրպրոցում, մարմնամարզանքի ուսուցիչներ՝ Ֆիզկոպտուրայի ինստիտուտում, կարուձևի, ձեռագործի և գորգագործության ուսուցչուհիներ՝ համապատասխան դպրոցներում: Հայրենադարձ ուսուցիչների տոկոսը մեծ է հատկապես Օտար լեզուների ինստիտուտում: Մի շարք լրիվ միջնակարգ դպրոցներում՝ հայրենադարձ ուսուցիչները սովորեցնում են նաև

հայոց լեզու, աշխարհագրություն, թվաբանություն և այլ առարկաներ: Հայրենադարձ դասատուներ կան նաև էջմիածնի Հոգևոր ճեմարանում, որոնց մասին գրել ենք մենք «էջմիածին» ամսագրի վերջին համարում:

Բոլոր հայրենադարձ ուսուցիչները ունեն բնակարանային և աշխատանքային լավ պայմաններ և ստանում են գոհացուցիչ աշխատավարձ: Նրանք ազատված են վաղվա անապահովության հոգեմաշ տանջանքներից և մոռացած են իրենց պանդխտության օրերի դառնությունները:



Այս ընդհանուր տեղեկություններից հետո, ծանոթանանք մի քանի կոնկրետ ուսուցիչների հետ:

Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանում պաշտոնավարում են չորս հայրենադարձ դասախոսներ, բոլորն էլ Ֆիլոլոգիական ֆակուլտետում: Իրանից ներգաղթած Վարդան Մելիքյանը դասավանդում է պարսկերեն լեզու և գրականություն: Եգիպտոսից ներգաղթած Հայկ Ոսկերիչյանը, ինչպես նաև հայրենադարձ Ղազարոս Հակոբյանը, սովորեցնում են անգլերեն լեզու և գրականություն: Ֆրանսիայից ներգաղթած Թադևոսի Շահնազարյանը դասավանդում է ֆրանսերեն լեզու և գրականություն:

Ֆիլոլոգիական ֆակուլտետի դեկանատում ծանոթանում ենք ավագ դասախոս Վարդան Մելիքյանի հետ: Թուխ և կանոնավոր դիմագծերով, փայլվիտն հայացքով և պայծառ ժպիտով այս երիտասարդ անձնավորությունը իսկույն և եթ գրավում է համակրությունը: Նա իրանից ներգաղթել է 1946 թվին: Ուրախ է իր ներկայի համար և խիստ լավատես՝ իր ապագայի նկատմամբ:

— Իրանում ավարտել եմ իրանական լրիվ միջնակարգ դպրոց և խորացել պարսկերեն լեզվի և գրականության հմտության մեջ, — ասում է նոր ծանոթս: — Չնայած բարձրագույն ուսման վկայական չունեի, բայց Համալսարանը անշտի սիրալիր գտնվեց իմ նրկատմամբ. պաշտոն սվեթ և օգնեց ինձ ավելի մասնագիտանալու: Ստանում եմ ամսական 1200 ուրլի աշխատավարձ: Հարկավոր էր, որ ես աղաբացների ինձ հանդեպ ցույց տրված բարեհոգությունը և վստահությունը: Սովորեցնելով մեկտեղ, ես սովորեցի... էքստերնատի կարգով ուսանող գրանցվեցի և հանձնելով քննությունները՝ վկայվեցի իմ ֆակուլտետի Արևելյան լեզուների բաժնից: Բարձրագույն ուսման վկայական ստանալուց անմիջապես հետո, առաջ քաշեցին ինձ և նշանակեցին ինքնուրույն դասախոս: Բայց

դրանով էլ չեմ բավարարվում. ես ցանկանում եմ ավելի առաջ գնալ. պատրաստում եմ դիմերտացիա: Թեմաս է՝ Օմար Խայամին վերագրված մեկ քանի հազար քառյակներ: Ես լեզվական, ոճային և պատմական անհերքելի փաստարկներով ապացուցում եմ, որ դրանցից մոտ 350-ն են վավերական և Խայամի ստեղծագործությունները: Շուտով կպաշտպանեմ դիմերտացիա և կստանամ գիտությունների թեկնածուի աստիճան: Այն ժամանակ իմ աշխատավարձը մեկ անգամից կբարձրանա մոտ 3000 ուրլու և հետզհետե կավելանա՝ պաշտոնավարությանս տարիների հետ:

— Այստեղ գիտական աշխատողը ունի առաջդիմության անսահման փակ ասպարեզ, — եզրափակում է ավագ դասախոս Մելիքյանը, հայացքը հառած ընդարձակ լուսամուտից դուրս, Ղոճախյանի անվան պուրակին, որտեղ ձմեռային ձյունի սպիտակափառ սավանի վրա խաղում է գարնանային արեգակը՝ զարմանալիորեն պարզ ու կպուտակ երկնքի շարամաղված:



Ստալինյան պողոտայի վրա, Շահումյանի անվան լրիվ միջնակարգ իգական դպրոցում, ֆրանսերեն լեզվի դասատու է Սիրիա-Լիբանանից ներգաղթած երկարալեզա ուսուցիչ Հովհաննես Կոշկարյանը, որի վրա հատուկ ուշադրություն դարձվեց անցյալ տարի. ընտրական տեղամասում առաջարկվեց նրա թեկնածությունը Ժողովրդական դատարանի ատենակալի պաշտոնին և նա ընտրվեց:

Ուսմասվար Արուսյակ էդիկյանը Կոշկարյանի հետ ծանոթացնում է մեզ իր առանձնասենյակում:

— Ինչպե՞ս եք զգում ձեզ այս դպրոցում, — հարց եմ տալիս հայրենադարձ դասատուին:

— Բառ չեմ գտնում իմ դիրեկտորի, ուսմասվարի և, առհասարակ, իմ թուր պաշտոնավիցյաներիս ինձ հանդեպ ցույց տված հոգատարության համար շնորհակալությունս հայտնելու, — պատասխանում է խոսակիցս ջերմ շեշտով և ուրախ արտահայտությամբ:

— Մի քիչ խոսեցեք ձեր անցյալ և ներկա կյանքի մասին, — խնդրում եմ:

— Մնվել եմ 1898 թվականին, Տիգրանակերտ նահանգի Պախըր Մատեն քաղաքում, և սովորել տեղի հայոց դպրոցում, պիսակոր ուսուցիչ ունենալով բազմավաստակ ուսուցիչ Ազարիկ Գոլոյանը, որը, անպայման, ձեր էլ ուսուցիչը եղած պետք է լինի, դրովհետև նա իր կյանքի վերջին ավելի քան երեսուն տարի-

ները պաշտոնավարել է Գահիրեի Գալստյանի անվան հայոց դպրոցում...

— Ճիշտ է, եղել է և իմ ուսուցիչը:

— Ուսումս ավարտել եմ Խարբերդի Եփրատ գրեզում, — շարունակում է նա: Քսանեղև տարի, իմ ծննդավայր քաղաքում, Հալեպում և այլ քաղաքներում, քարշ եմ տվել հայ ուսուցչի տառապալից կյանքը: Ենթակա եմ եղել հոգաբարձուների քմայքներին, տուժել շատ անզամներ, նրանց կռիվներին... Կերհի-

ված բազմահարկ մեծ շինքում, ունեմ երկարատև պետական վարկի փոխարեն կառուցված անձնական բնակարան — երկու սենյակ, խոհանոց և ամեն հարմարություն: Երեք զավակներս սովորում են, և դրա համար ոչինչ չեմ վճարում: Երեքն էլ ընդգրկված են Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում: Տղաս՝ Սարգիսը, սովորում է թավջութակ, մեծ աղջիկս՝ Աղավնին, սովորում է դաշնամուր, իսկ կրտսեր աղջիկս՝ Ազ-



Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի մի խումբ հայրենադարձ ուսանողներ գրադարանի ընթերցարանում պարապելիս:

շելով իր տառապալից ուղին, նա մի փոքր լռություն է պահում և ապա շարունակում:

— Այստեղ, վերջապես, ես գտա իղձերիս իրականացումը և ապրում եմ որպես իսկական մարդ՝ ազատ և ապահով: Ընտրվեցի Ժողովրդական դատարանի ատենակալ: Ուրիշ հայրենադարձ ուսուցիչներ ընտրված են քաղաքային և շրջանային սովետների դեպուտատ... Տեսնո՞ւմ եք, մենք, ուսուցիչներս էլ մարդ ենք, լիիրավ քաղաքացի — ընտրող և ընտրելի... Այստեղ հաշվի առնվեց իմ ուսուցչական 28 տարվա անցյալ պաշտոնավարությունս և ես, բացի իմ աշխատավարձից, ստանում եմ նաև երկարամյա աշխատանքի թոշակ: Դպրոցից ընդամենը մեկ քանի քալ հեռու, Ղուկասյան և Ալավերդյան փողոցների անկյունի վարդապույն տուֆից կառուց-

նիվը, հետևում է ջուլիակի: Երաժշտական գործիքները, նոտաները, գրքերն ու գրենական պիտույքները, տրամադրվում են ձրիաբար դպրոցի կողմից: Դեռ ավելին. այս դպրոցում, գերազանցիկ սովորող աշակերտները, սկսյալ հինգերորդ դասարանից, ստանում են պետական թոշակ... Երևակայեցեք 12 տարեկան մի երեխա, որը սովորում է և՛ երաժշտություն, և՛ հանրակրթական առարկաներ լրիվ միջնակարգ դպրոցի ուսուցման համապատասխան և որը ո՛չ միայն ծախս չի նստում իր ծնողների վրա, այլև բերում է տուն ամսական շուրջ 200 ոտբլի... Նման բան կարո՞ղ էիք պատկերացնել արտասահմանում: Չայկովսկու անվան դպրոցում երաժշտական ուսումը և ընդհանուր ուսումը գնում են համընթաց:



երկարամյա ուսուցիչ Կոչկարյանի հիացումի բառերկա հանդիսացող Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում և նույն շենքում (բազմահարկ շքեղ մի շենք՝ Ստալինյան պողոտայի վրա) հաստատված երաժշտական ուսումնարանում ընդգրկված են մոտ 100 հայրենադարձ աշակերտներ: Այնտեղ պաշտոնավարում են երեք հայրենադարձ դասատուներ: Ե՛վ դպրոցում, և՛ ուսումնարանում, դաշնամուրի դասեր է տալիս Եգիպտոսից ներգաղթած դաշնակահարուհի և դաշնամուրի ուսուցչուհի Թադուհի Արամյանը, որը, շնորհիվ իր ձեռնհասության, վայելում է մեծ ժողովրդականություն իր պաշտոնակիցների, աշակերտության և ուսանողության շրջաններում: Նա ստանում է 2000 ռուբլի աշխատավարձ: Իր փոքրիկներից մեկը՝ Սոնիկը, որը վերջերս ավարտեց իր վեցերորդ տարին և թևակոխեց յոթերորդը, ընդունված է Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում, որտեղ սովորում է սովֆեջիո (խաղերգություն), դաշնամուր և հանրակրթական տոարկաներ: Մյուս երեխան՝ Նաիրին, գնում է մանկապարտեզ: Թագուհի Արամյանը շատ երջանիկ է իր պայմաններից և փայլուն հեռանկարներից:

Այդ միևնույն հաստատություններում, դասատու են նաև Հունաստանից ներգաղթած Գրիգոր Գարաճյանը (չովթակ) և Բելյուսից ներգաղթած Հրանտ Գեորգյանը (սովֆեջիո): Գարաճյանը միաժամանակ կոնցերտմեստր է Պետական Օպերայում և հաճախակի ելույթներ է ունենում պետական ռադիոկայանից:

Ե՛վ Չայկովսկու անվան դպրոցի դիրեկտորը, ջերմ գոհունակությամբ և գովեստով են խոսում հիշված երեք դասատուների մասին:

— Նրանք աշխատում են մեծ եռանդով և նվիրումով,— հայտարարում է մեզ Չայկովսկու անվան դպրոցի դիրեկտորը,— և վայելում են մեր ուսուցչության և աշակերտության ջերմ սերն ու հարգանքը. աշխատեցին ազնվորեն և դարձան մեր կուկիտիվի հարագատ անդամները:

բ) ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ստալինյան լայնարձակ և շքեղ պողոտայով բարձրանում ենք վեր ու գնում դեպի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանը, ջերմությամբ զրույց անելով այն բարձունքների մասին, որ նվաճում են հայրենադարձ ուսանողներն ու աշակերտները ուսման բնագավառում:

— Հայրենադարձ ուսուցիչները լիովին արդարացրին մեր հույսերը,— հայտարարեց մեզ տեխնիկումի դիրեկտոր Գուրգեն Հայրապետյանը,— ջերմ համակրություն են շահել դեպի իրենց աշխատանքը իրենց գիտակից և նվիրված վերաբերմունքով:



Անինի փողոցում, Մաքսիմ Գորկու անվան լրիվ միջնակարգ դպրոցում, ֆրանսերենի ուսուցիչ է Բելյուսից ներգաղթած երիտասարդ և եռանդակից Պարգև Շահբազը: Չնայած իր երիտասարդ տարիքին և փոքր ստաժին, նա ստանում է 1000 ռուբլուց ոչ պակաս աշխատավարձ: Արաբկիրում ինքը և ծնողները կառուցել են չորս սենյակից բաղկացած հիանալի բնակարան: Ե՛վ սովորեցնում է, և՛ էքստերնատի կարգով հետևում Օտար լեզուների ինստիտուտի ֆրանսիական լեզվի և գրականության դասընթացին, երկու տարուց բարձրագույն ուսման վկայական ձեռք բերելու հեռապատկերով:

— Ինչ ինձ խանդավառում է մասնավորապես,— ասում է նա,— ուսուցչի վայելած նյութական—տնտեսական լավ պայմանները չեն միայն, այլ նաև այն, որ ուսուցիչը, սովետական պայմաններում, չի լճանում, չի մնում կառչած իր վաղուցվա սովորածին: Կան վերադարձավորման միամյա դասընթացներ, որտեղ, մասնագետների ղեկավարությամբ, ուսուցիչները իրենց գիտելիքների սահմանները ընդարձակում և ամրապնդում են: Ուսուցչին մեթոդական և այլ բնույթի օժանդակություն են ցույց տալիս տվյալ կրթական հաստատության ղեկավարությունը, ինչպես նաև՝ Լուսավորության մինիստրության կողմից նշանակված տեսուչները: Հետաքրքրական հաստատություն է հանդիսանում և նմանատիպը շուրի արտասահմանում՝ վերապատրաստման ինստիտուտը, ուր յուրաքանչյուր ուսուցիչ կարող է վերապատրաստվել: Լճացումի վտանգ չկա ուսուցչին համար նման պայմաններում:

Այսպես են ուսուցչի պայմանները հարագատ հայրենիքում — Սովետական Հայաստանում:

Ուղեկիցներս և զրուցակիցներս՝ երկու ուսանողուհիներ են, երկուսն էլ Ֆիլոլոգիական ֆակուլտետի 5-րդ՝ վերջին կուրսից: Մեկը՝ դեռատի ուսանողուհի էմմա Ղաշոյանն է, երևանցի, իսկ մյուսը՝ Ֆրանսիայի պարտիզանների ջոկատներից մեկի հերոսական հրամանատար Միսաք Մանուշյանի երիտասարդ ալբին՝ Մելինեն: Այս վերջինս հայրենադարձ

ուսանողների «վեպերան»ն է, ամենահինը՝ Համալսարանը ընդունվելու ժամանակագրական կարգով, և գուցե ամենատարեցը նրանց մեջ: Բայց նրա տարիքը մոռանում ես, տեսնելով իր պատանեկան արտաքինը և մանավանդ լսելով պատանեկան խանդավառությունները: Նա հայրենիք եկավ հայրենադարձության մեծ շարժումի սկսելուց քիչ առաջ, 1945 թվականի աշնանը, և, անմիջապես, մտավ Համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետը: Գերազանցիկ սովորող է և արդեն հասել է 5-րդ կուրս:

— Այս տարի կավարտեմ Համալսարանը, կմտնեմ ասպիրանտուրա, կպաշտպանեմ դիսերտացիա և կստանամ գիտական աստիճան ու կոչում, — ասում է նա կենսուրախ ժպիտով:

Նա խոսում է իր դասախոսների, իր դասընկերների, իր սովորած առարկաների մասին վարակիչ խանդավառությամբ: Խոսում է հայրենադարձ ուսանողների սովորելու ջերմ եռանդի մասին, նրանց դրսևորած փայլուն արդյունքների մասին:

— Ես, — ասում է Մելինեն, — կարող էի հանգիստ ապրել իմ ամուսնու հիշատակին՝ պետության կողմից ինձ տրվող ամսական 500 ռուբլի անձնական թոշակով: Բայց մի՞թե հնարավոր է անաշխատ և անտարբեր մնալ Երևանի նման բարձրագույն ուսման մի մեծ ուստանում, ականատես լինելով երիտասարդության հաղթարշավ երթին դեպի ուսման բարձունքները: Փարիզում ես ո՛չ տրամադրություն ունեի և ո՛չ էլ նյութական միջոցների թերի մնացած ուսումնա շարունակելու: Այստեղ, տրամադրությունս փոխվեց. դարձավ պատենա, կենսուրախ: Նյութական միջոցներ՝ այո՛, արտասահմանում, հարուստ ընտանիքների զավակները միայն կարող են բարձրագույն ուսման հետևել: Այստեղ, ինչպես հայտնի է ձեզ, պետությունը ուսանողին տալիս է թոշակ. կան սովորական թոշակներ, կան անվանական թոշակներ և կան Ստալինյան թոշակներ: Սովետական Հայաստանում ամենալայն միջոցներ կան բարձրագույն ուսման հետևելու, այն էլ՝ մայրենի լեզվով... Մոռացա իմ տարիքը և մտա համալսարան...

— Ո՛չ միայն ուսման ծախս չկա, — շարունակում է Մելինեն, — այլև Շիրվանզադեի անվան թոշակառու եմ և ստանում եմ ամսական 380 ռուբլի: Ես պետք է խոստովանվեմ, որ այստեղ էլ ո՛չ միայն սովորեցիք հայոց հին լեզուն՝ գրաբարը, վերժանեցինք հայոց հին պատմիչներն ու մատենագիրները, այլ

այստեղ է, որ հանգամանորեն ծանոթացանք իսկապես արևմտահայ գրողներին, որոնց գործերից մեկն ու մեկը պատահաբար կարդացել էինք արտասահմանում: Այստեղ է, որ ես խորապես ծանոթացա Պարոնյանի, Դուրյանի, Զոհրաբի և մյուս արևմտահայ գրողների կյանքին և գործերին: Իսկ արևալահայ գրականությունը մի անժանոթ կամ կիսանժանոթ աշխարհ էր ինձ համար: Այժմ, այդ ընդամենը, կարող եմ ասել, թե ինձ համար անժանոթ անկյուն չկա: Այստեղ է, որ իմ աչքերի առաջ պարզվեց՝ ինձ համար մի ճշմարիտ հայտնություն լինելով, ուսական պերճ ու շքեղ, և այնքան կենսունակ գրականությունը: Այժմ իմ ամբողջ բաղձանքն է՝ օր առաջ տիրապետել ուսաց լեզվին, որպեսզի բնագրերով կարողանամ կարգալ Պուշկինին, Բելինսկուն, Տոլստոյին, Գորկուն և մյուսներին:

Մինչ Մելինեն խոսում է պատանեկան աշխույժով և ոգևորությամբ, ես խորհրդածում եմ: — Արտասահմանյան պայմաններում հայերը համալսարան կամ բարձրագույն ուսման հաստատություն չունեն և չեն էլ կարող ունենալ: Իսկ օտար համալսարանները մատչելի են հարուստ ընտանիքների զավակներին միայն: Սփյուռքում լրիվ միջնակարգ դրպոցներն անգամ շատ սակավաթիվ են, ընդամենը՝ չորս կամ հինգ միայն, մոտ միլիոնանոց հայության համար... Այնտեղ, հայ պատանիների ուսման ծախսը մնում է անհաղ... Իսկ ի՞նչպես է այստեղ, հայրենի երկրում: Միայն մեր մայրաքաղաքում ունենք Պետական համալսարան՝ տասը ֆակուլտետներով, ունենք տասնչորս ինստիտուտ, տասնյակներով տեխնիկումներ և լրիվ միջնակարգ դպրոցներ... Եվ այս բոլորը մատչելի բոլոր ցանկացողներին, բոլոր ընդունակներին: Եվ այս բոլորը՝ ձրի: Դեռ ավելին. բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները՝ պետական թոշակառու... Օտարերկրյա և հայրենական պայմանների այս բաղադրատոմսով միանգամայն հասկանալի է դառնում, որ հայրենադարձների զավակները գրոհում են դեպի ուսման օջախները՝ սովորելու վառ տենչերով: Եվ այժմ Պետական Համալսարանի զանազան ֆակուլտետներում, ինստիտուտներում, տեխնիկումներում ընդգրկված են, ավելի քան 400 հայրենադարձ ուսանողներ և ուսանողուհիներ, իսկ դպրոցներում և արհեստագիտական ուսումնարաններում՝ ոչ պակաս քան 18,000 հայրենադարձ աշակերտներ և աշակերտուհիներ:



Մեկինքի հետ զրույցից մի քանի ըոպե հետո, Կետական Համալսարանումն եմ, ռեկտորի ընդարձակ ընդունարանում, որտեղ, ռեկտոր Գ. Պետրոսյանը, ինչպես և ուսումնական մասի պրոռեկտոր պրոֆ. Մեկիքյանը, բավարարում են իմ հարցասիրությունը մեծ ազնվությամբ:

— Համալսարանի զանազան ֆակուլտետներում ունենք մոտ 80 հայրենադարձ ուսանողներ և ուսանողուհիներ: Իսկ թե ի՞նչպես են սովորում՝ տեսե՛ք զնահատականների ցուցակները. նրանցից 37-ը՝ մոտ 50 տոկոսը, բացարձակ գերազանցիկ են, 21-ը՝ լավ և գերազանցիկ են, մնացյալը, փոքր տոկոսը, լավ և միջակ սովորողներ: Մոտ 80 հայրենադարձ ուսանողներից 44-ը ընդգրկված են ֆիլոլոգիական ֆակուլտետում: Այդ ֆակուլտետի դեկանը կարող է ավելի մանրամասն տեղեկություններ տալ ձեզ և ծանոթացնել գերազանցիկներից մեկ քանիսի հետ:

Անցնում ենք ֆիլոլոգիական դեկանի առանձնատենյակը: Երիտասարդ պրոֆեսոր-դոկտոր էդ. Աղայանը ընդհատում է իր աշխատանքը և մեծ տիրալիրությամբ բավարարում մեզ:

— Մեր ֆակուլտետը, — ասում է նա, — ունի յոթը բաժանմունք՝ հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, հվրոպական լեզուներ և գրականություններ, արևելյան լեզուներ և գրականություններ, լուգիկա և հոգեբանություն, ժողովալիստիկայի և գրադարանագիտություն: Բոլորի մեջ էլ, բացի ռուսական բաժնից, կան հայրենադարձներ: Նրանք, ընդհանուր առմամբ, սովորում են հիանալի եռանդով: Պարտաճանաչ են և կարգապահ: Բացառիկ ուշադրություն են դարձնում այն առարկաների վրա, որոնց հետ շփում չեն ունեցել արտասահմանում՝ ռուսաց լեզու և գրականություն, մարքսիզմ-լենինիզմի առարկաներ և այլն: Խանդավառ սեր և հետաքրքրություն են ցուցաբերում հանրեպ հայոց լեզվի և գրականության: Մեզ մոտ են սովորում հայրենադարձ երիտասարդ գրողներից մի քանիսը՝ Շաքե Վարսյանը, Գրիգոր Քեշիշյանը, Անդրանիկ Թերզյանը, Աբրահամ Ալիքյանը և ուրիշներ: Հայրենադարձ ուսանողները և ուսանողուհիները մասնակցում են հասարակական աշխատանքներին այնպիսի եռանդով և նվիրվածությամբ, որ չես կարող չհիանալ: Ցանկություն ենք հայտնում անձամբ ծանոթանալ գերազանցիկներից մի քանիսի հետ:

Պրոֆեսոր Աղայանը, մի քանի ըոպե հետո, ինձ մոտ է ուղարկում մի խումբ գերազան-

ցիկներ, իսկ ինքը գնում է լսարաններից մեկը դասախոսելու:

Ահա Սյուլահյան ժանետ և Անժիկ քույրերը — խարտյաշ, կապուտաչլի, սիրուն և մեծ ճաշակով ու վայելչությամբ հագնված: Ժանետը՝ հվրոպական լեզուների և գրականությունների 4-րդ կուրսի ուսանողուհի է, իսկ Անժելը՝ լոգիկայի և հոգեբանության 3-րդ կուրսումն է: Ներգաղթել են Բելյուսից 1946 թվականին: Սյուլահյանները բազմախոս և հայտնի ընտանիք են, բնիկ Այնթապցի: Ծյուղավորումներ ունեն Սիրիայում, Լիրանում, Եգիպտոսում և Ամերիկայում:

Ժանետը և Անժիկը, Ռուբեն Սյուլահյանի 12 զավակներից ամենակրտսերներն են: — Թողել ենք մեր ծնողներն ու 6 եղբայրներն ու քույրերը և մենակ եկել հայրենիք, — ասում է ժանետը, — այնքան ուժեղ էր և անդիմադրելի հայրենիքի կանչը: Բայց միայնակ չենք զգում մեզ, մեր դասախոսները՝ մեր հարազատ հայրերն են, իսկ մեր ընկերները՝ եղբայրները ու քույրերը մեզ համար սովորում ենք եռանդով: Բոլոր առարկաներում գերազանցիկ ենք:

Ահա ներկայանում է գերազանցիկ Հյուբի Խաչատրյանը. նույնպես կապուտաչլի, խարտյաշ, կենսահորդ մի երիտասարդուհի: Նա Իրանից գնացել էր Բելյուսի ամերիկյան համալսարանը սովորելու: Երբ հայրենադարձություն արտագրավ հրավերը հասավ Միլյուտը, Հյուբին, նույն համալսարանի բժշկական ֆակուլտետից նոր վկայված, նույնպես իրանահայ Սեպուհ Թումանյի հետ ամուսնացավ և եկավ հայրենիք 1946 թվին: Հետագայում, արտասահմանում ստացվեց «Մեր Երևանը» խորագրով նրա խանդավառիչ հոդվածը, և տպագրվեց հայ հառաջադիմական մամուլում՝ մեծ տպավորություն առաջացնելով:

— Լոգիկայի և հոգեբանության 4-րդ կուրսումն եմ, — ասում է Հյուբին: — Սովորում եմ հարաձույն անսպառ եռանդով. սովորում եմ մայրենի լեզվով, և ոչ անգլիերենով՝ ինչպես Բելյուսիումն էր: Մայրենի լեզվով բարձրագույն ուսում ստանալ, անհասանելի մի երազ էր թվում ինձ մի ժամանակ: Այժմ, երազ չէ: Ամուսինս՝ Սեպուհը, գիտական աշխատող է: Աշխատելուս հետևանքով փողոցների անկյունի մեծ շենքում ունենք շատ լավ հարկաբաժին: Ապրում ենք երջանիկ. և՛ սովորում ենք, և՛ զարգանում: Գերազանցիկ եմ բոլոր առարկաներում:

Մանոթանում ենք հայրենադարձ գերազանցիկներից Հակոբ Փափաղյանի հետ:

— Իրանից եմ, — ասում է Հակոբը: — Արևելյան լեզուների բաժնի 4-րդ կուրսի ու-

սանող: Սովորում եմ արաբերեն: Դասախոսս՝ Մոսկվայի Արևելյան Ինստիտուտի շրջանավարտներից երիտասարդ և հմուտ արաբագետ Հրանտ Սարգսյանն է: Ես Իրանում ավարտել էի իրանական միջնակարգ դպրոցը... Հետագային, ամբողջ ութ տարի, ես հնարավորություն չունեցա իմ ուսումը շարունակել, հակառակ ցանկությունս: Այժմ ամեն հնարավորություն ունեմ սովորելու. սովորում եմ վառ եռանդով, ազատ հայրենիքում, հարազատ Հայկական Համալսարանում: Բացարձակ գերազանցիկ եմ:

Նորից հնչում է զանգը. դասախոսություն

հաջորդ ժամն է: Ես հնարավորություն չեմ ունենում անձամբ, մի առ մի, ծանոթանալ ներկա եղող մյուս գերազանցիկների հետ:

Երկար ու լայն միջանցքներով, մոնումենտալ սանդուխքներով, դեպի լսարանները շտապող աշխույժ և կենսալից ուսանողների և ուսանողուհիների միջով անցնելով, իջնում եմ Արևմտյան պողոտան և վերագտնում պեյզաժի վրա ցուցլացող պայծառ արեգակը:

Հայրենադարձ ուսանողների դեմքերն ու հոգիները պայծառ են և զվարթ՝ ինչպես պարնանային արեգակը:

Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՐԵՐ ԱՌԱՋ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՏԱՐՎԱԾ ՍԵՒԻ ՏԵՍԱԿԸ  
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Արտասահմանում ապրող ամեն մի ազնիվ հայր հայացքն ուղղված է դեպի իր նվիրական հայրենիքը՝ Սովետական Հայաստան: Սրա համար չկա ավելի մեծ ցանկություն, քան վերջ դնել իր թափառական կյանքին, գալ ազատ Հայաստան և օգտվել նրա ստեղծած հոգեկան ու նյութական առատ բարիքներից. նա ձգտում է աշխատել ու ստեղծագործել իր հարազատ հայրենիքում:

Այդպիսի հայրենադարձներից է Մկրտիչ Դեմիրջյանը: Նա մասնազգիտություն բանջարաբույժ է: Անցյալում աշխատել է Ֆրանսիայի սելեկցիոն փորձադաշտերից մեկում: Նա սիրել է իր մասնազգիտությունը, բայց աշխատանքի պայմաններից երբեք զոհ չի եղել. փողով են գնել և՛ իրեն, և՛ իր աշխատանքը: Դեմիրջյանը որոշել է անհապաղ հայրենիք վերադառնալ:

1947 թվականի սեպտեմբեր ամսում Դեմիրջյանը ապրեց հրճվալից օրեր. իրագործվեց նրա տարիների ցանկությունը— Ֆրանսահայ մի մեծ կարավանի հետ նա մեկնեց Հայրենիք: Ուրք դնելով «Ռուսիա» նավի վրա, նա զգաց, որ ինքն արդեն ազատ է և նոր հեռանկարներ են բացվում իր առջև. «Գնում եմ Հայրենիք, որտեղ ինձ կտան սելեկցիոն աշխատանքներ կատարելու համար իմ ցանկացած հնարավորությունները»,— մտածում էր նա:

Սովետական Հայաստանում ամեն մի հայրենադարձի համար կար համապատասխան աշխատանք: Դեմիրջյանը, առանց ժամանակ կորցնելու, աշխատանքի անցավ բանջարաբուծական սելեկցիոն կայանում: Այստեղ բոլորը աշխատում են միջուրիյան ուղիով:

Աղգակիցների հարազատ շրջապատը անասնի ոգևորեց հայրենադարձին, աշխատանքի և ստեղծագործելու մեծ եռանդ տվեց նրան: Նա այնքան շուտ յուզացրեց Միջուրինի ուսմունքը և այնպիսի արդյունավետ աշխատանք կատարեց, որ դարձավ սելեկցիոն կայանի լավագույն աշխատողներից մեկը: Աշխատակիցների հետ միասին, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Անահիտ և Անանյանի ղեկավարությամբ, Մկրտիչ Դեմիրջյանը կատարում էր սելեկցիոն աշխատանքներ: Նրան հանձնարարված է փորձարկել դոմազգիների մի տեսակը՝ արժեքավոր մի սեխ, որն ունի իր հետաքրքիր պատմությունը: Այդ սեխի պատմությունը որոշ չափով կապված է հենց հայրենադարձ աշխատող Մկրտիչ Դեմիրջյանի անվան հետ:

Ֆրանսիայում եղած ժամանակ Դեմիրջյանը իմացել էր, որ Ֆրանսիայում տարածված «Կանտալուպ» կոչվող սեխը ներմուծված է: 15-րդ դարում Ֆրանսիացիները այդ սեխի սերմերը Իտալիայից տարել են իրենց երկիրը և աճեցրել: Ֆրանսիական և ռուսական աղբյուրներից հայտնի է, որ սեխի այդ տեսակը Խալախկան միսիոններները Հայաստանից են տարել:

Դեմիրջյանը գիտեր, որ հայերի գաղթերի հետևանքով, անհետացած պիտի լինեն սեխի շատ տեսակներ: Նա ենթադրում էր, որ կարող է անհետացած լինել նաև «Կանտալուպ» կոչվող այս տեսակը: Դրա համար էլ նա հատուկ սելեկցիոն աշխատանք է կատարում այդ ուղղությամբ Ֆրանսիայում, ընտրում է